

**Ձեր երեխայի իմունիզացիայի/տուբերկուլոզի (ՏԲ) դպրոցի հետազոտման թեստի տեղեկատվությունը  
Կալիֆորնիայի իմունիզացիայի ռեգիստրին (CAIR) հայտնելու թույլտվություն**

Իմունիզացիաները կամ «ներարկումները» կանխարգելում են լուրջ հիվանդությունները: Տուբերկուլոզի (ՏԲ) հետազոտական թեստերը օգնում են պարզել, թե արդյոք ունեք ՏԲ-ի վարակ, և կարող են պահանջվել դպրոց ընդունելության ժամանակ: Ձեր երեխայի ներարկումների/ՏԲ-ի թեստերի արդյունքներին հետևելը կարող է դժվար լինել, հատկապես, եթե դրանք կատարվել են մեկից ավելի բժիշկների կողմից: Կալիֆորնիայի իմունիզացիայի ռեգիստրը (CAIR) հանդիսանում է համակարգչային ապահով համակարգ, որին բժիշկները և առողջապահության ոլորտի լիազորված աշխատողները դիմում են՝ Ձեր երեխայի ներարկումներին և ՏԲ-ի թեստերին հետևելու նպատակով: Եթե Դուք փոխեք Ձեր բժիշկներին, ապա նոր բժիշկը կարող է օգտվել ռեգիստրից՝ տեսնելու Ձեր երեխայի ներարկումների/ՏԲ-ի թեստերի տվյալները: CAIR-ը գործում է Կալիֆորնիայի առողջապահության դեպարտամենտի հովանավորությամբ:

**Ինչպե՞ս է CAIR-ը աջակցում Ձեզ:**

- Արձանագրում է Ձեր երեխայի բոլոր ներարկումները և ՏԲ-ի թեստերը (մաշկային թեստ/կրծքավանդակի ռենտգեն), որպեսզի նա բաց չթողնի որևէ մեկը կամ չստանա նախատեսվածից ավելին
- Ձեզ տրամադրում է Ձեր երեխայի ներարկման/ՏԲ-ի թեստի ամենավերջին տվյալների պատճենը (բժշկից)
- Օգնում է երեխային խնամք տրամադրող կամ դպրոցի աշխատակիցներին հաստատել, որ Ձեր երեխան ստացել է ներարկումներ/ՏԲ-ի թեստերը, որն անհրաժեշտ է երեխայի խնամքը սկսելու կամ դպրոց ընդունվելու համար
- Օգնում է Ձեր բժշկին՝ ուղարկելու Ձեզ հիշեցումներ, երբ Ձեր երեխան ներարկման կարիք ունենա

**Ինչպե՞ս է CAIR-ը աջակցում Ձեր դպրոցին:**

Համաձայն Կալիֆորնիայի օրենսդրության՝ դպրոցները, մանկական խնամքի և այլ հաստատությունները կարող են օգտվել CAIR-ից միայն հետևյալի համար.

- Տեղեկանալ, թե իրենց ծրագրերում ընդգրկված երեխաները ինչ ներարկումներ/ՏԲ-ի թեստեր են ստացել կամ որոնց կարիքը ունեն
- Վստահանան, որ երեխաները ստացել են բոլոր անհրաժեշտ ներարկումներ/ՏԲ-ի թեստերը, որը պահանջվում է երեխայի խնամքը սկսելու կամ դպրոց ընդունվելու համար

**Ի՞նչ տեղեկատվություն է հայտնվում CAIR-ին:**

- Ձեր երեխայի անունը, սեռը, ծննդյան ամսաթիվը և վայրը
  - Ծնողների կամ խնամակալների անունները
  - Ձեր երեխայի ներարկումների/ՏԲ-ի թեստերի մանրամասներ, ինչպես օրինակ՝ պատվաստման/ՏԲ-ի թեստի տեսակը և ստացման ամսաթիվը
  - Սահմանափակ ոչ բժշկական տեղեկատվություն՝ Ձեր երեխայի ճիշտ նույնականացման համար
- Ձեր երեխայի մասին տեղեկատվությունը ապահով կլինի: CAIR-ում ներմուծված ողջ տեղեկատվությունը համարվում է բժշկական մասնավոր տեղեկատվություն: Համաձայն Կալիֆորնիայի օրենսդրության՝ Ձեր հասցեն և հեռախոսահամարը կարող են հայտնվել *միայն* Ձեր բժշկի գրասենյակին, առողջապահական ծրագրին կամ հանրային առողջապահության դեպարտամենտին: Ռեգիստրի ոչ բարեխիղճ օգտագործումը պատժելի է օրենքով:

**Ծնողների և խնամակալների իրավունքները**

Ձեր օրինական իրավունքն է.

- Չհամաձայնել, եթե չեք ցանկանում, որ Ձեր երեխայի դպրոցի տվյալներից նրա ներարկման/ՏԲ-ի թեստի մասին տեղեկատվությունը հայտնվի CAIR-ին
- Փոխել Ձեր միտքը հետագայում, երբ ցանկանաք դադարեցնել կամ սկսել հայտնել Ձեր երեխայի ներարկման/ՏԲ-ի թեստի տեղեկությունները CAIR-ին
- Տեսնել CAIR-ում առկա Ձեր երեխայի ներարկման/ՏԲ-ի թեստի տվյալների պատճենը և խնդրել Ձեր բժշկին ուղղել ցանկացած հնարավոր սխալները
- Տեղեկանալ, թե ով է ծանոթացել Ձեր երեխայի CAIR-ում առկա գործին տվյալներին ում

**Եթե ցանկանում եք թույլատրել Ձեր դպրոցին՝ Ձեր երեխայի դպրոցի տվյալներից տեղեկատվություն հայտնել Կալիֆորնիայի իմունիզացիայի ռեգիստրին, ապա USՈՐԱԳՐԵՔ և ՆՇԵՔ ԱՄՄԱԹԻՎԸ ստորև: Մնացածը կկատարի Ձեր դպրոցը:**

_____ <b>Ծնողի/խնամակալի ստորագրություն</b>	_____ <b>Այսօրվա ամսաթիվը</b> ____/____/____
_____ <b>Երեխայի լրիվ անունը (տպագիր տառերով)</b>	_____ <b>Երեխայի ծննդյան ամսաթիվը (ամիս/օր/տարի)</b> _____
_____ <b>Սոր անունը և ազգանունները (տպագիր տառերով)</b>	_____ <b>Երեխայի սեռը. Ա Ի</b> <b>(շրջանի մեջ առեք)</b>

Եթե Ձե՞ք ցանկանում, որ Ձեր երեխայի ներարկման/ՏԲ-ի թեստի տվյալները հաղորդվեն CAIR-ին, ապա ոչինչ պետք չի անել: Ամեն ինչ արված է: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք CAIR-ի Աջակցության կենտրոնին՝ 800-578-7889 հեռախոսահամարով կամ [CAIRHelpDesk@cdph.ca.gov](mailto:CAIRHelpDesk@cdph.ca.gov):